



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11
էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 011

« 05 » Հունիսի 2014թ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ղուկասյան,

«Հիդրո կորպորացիա» ՍՊԸ –ի կողմից շահագործվող «Արգիճի» ՓՀԷԿ-ում շահագործման, փորձարկման օրից սկսած արդեն մի քանի անգամ պայթել են խողովակները և ողողել հարակից տարածքները՝ վնասելով շրջակա միջավայրը:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն.

1. փորձարկման և շահագործման օրվանից քանի՞ անգամ են պայթել խողովակները /նշել կոնկրետ օրերը և պատճառները ըստ օրերի/;
2. համայնքային նշանակության ինչքա՞ն հողատարածքներ, շինություններ են տուժել և ինչքա՞ն է կազմել հասցված վնասների չափը /տրամադրել տուժած օբյեկտների ցանկը՝ քանակը, տեսակը, կազմված ակտերի պատճենները՝ ըստ վթարի օրերի/
3. բնակիչներին պատկանող ինչքա՞ն հողեր են տուժել և ինչքա՞ն է կազմել հասցված վնասների չափը /տրամադրել կազմված ակտերի պատճենները՝ ըստ վթարի օրերի/:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող

Լ. Ասոյան